Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 6 (390) 1-17 ապրիլ, 2016թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Ադրբեջանի ահաբեկչությունը եւ միասնականության հրամայականը

Ադրբեջանի կողմից այս օրերին սանձազերծված պատերազմն ամենեւին պատահականություն կամ էլ թշնամու կողմից հապճեպ որոշում չէր, ասել է թե՝ պատերազմները նախօրոք են ծրագրվում:

Արդեն գաղտնիք չէ, որ ամեն մի պաշտոնական հանդիպումից առաջ Ադրբեջանն իր դեպրեսիան պարպում էր սահմանային լարվածության հրահրմամբ, ու արհամարհելով միջազգային կառույցների «խաղաղասիրական երկկողմ կոչերը»՝ ձգտում էր հակամարտության լուծումը մոտեցնել պատերազմի տարբերակին:

Այս պատերազմը մի օր պիտի սկսվեր, ու դա բոլորն էին գիտակցում՝ լավ ըմբռնելով Ադրբեջան պետության իսկությունն ու ալիեւյան կլանի վերջին տարիների խարդախ գործողությունները:

Հիրավի, անպատժելիությունից հղփացած երկիրը պիտի մի օր պոռթկար ատելության ցասումով՝ միաժամանակ համոզված լինելով, որ վերջում միջազգային հանրության աչքին կխեղաթյուրի իրադարձություններն ու փաստերը իրեն հատուկ ոճով:

Այս պատերազմը փաստեց՝ Ադրբեջանի դեմ մենք մենակ էինք, ինչպես եւ նախորդ՝ Արցախյան պատերազմում: Ադրբեջանի դեմ մենք միասնական էինք, ինչպես եւ նախորդ պատերազմում ու ինչպես նախորդ անգամ. այս անգամ եւս համայն հայության միասնականության ուժն ու կամքը եղավ հրադադար պարտադրողը: Այս պատերազմը, ինչպես նախորդը, տվեց նույն՝ ամենակարեւոր դասը՝ պետք է ամուր հենվել այս հողին, ունենալ մարտունակ ու զինյալ բանակ, ունենալ այնպիսի հայրենիք, որտեղ յուրաքանչյուր ոք իրեն ե՛ւ տեր, ե՛ւ պատասխանատու զգա: Նախորդ պատերազմը սկսեցինք «Միացո՛ւմ» կոչով. այս պատերազմը ցույց տվեց, որ այդ կոչի իրագործմանը հասնելու ճանապարհը պետք է սկսվի Մայր Հայաստանի կողմից Արցախի անկախության ճանաչումով...

Արցախյան պատերազմը ցույց տվեց, որ Ադրբեջանն ընդունակ է ամենաանմարդկային դրսեւորումների, ահաբեկչական բնույթի ցանկացած գործողության: Այս պատերազմը նորից փաստեց այդ ճշմարտությունը:

Իրավամբ, Իսլամական պետության ու այլ վարձու ահաբեկչական խմբավորումների՝ Ադրբեջանի կողմից ներքաշումն այս պատերազմին, բացահայտ ահաբեկչություն էր:

Խաղաղ բնակիչների հանդեպ ցուցաբերած գազանային վայրագությունները, դպրոցներ ու մանկապարտեզներ ռմբակոծելը եւ մանկահասակ երեխաներին վիրավորելն ու սպանելը միայն ու միայն ահաբեկչին հատուկ ձեռագիր է:

Ադրբեջանի պաշտպանության նախարարի կողմից աշխարհի առաջ արված՝ Ստեփանակերտին հարվածելու բացահայտ հայտարարությունը, անտարակույս, ահաբեկչի մոլուցք է:

Արդ, ո՞վ է սանձելու ահաբեկչին եւ ե՞րբ...

Չարիքի բույնը պետք է ոչնչացվի, թե չէ այն չարիք կդառնա ամբողջ աշխարհի մարդկության համար: Ադրբեջանն արդեն իսկ այդ չարիքն է, որի դեմ միահամուռ պայքար է պետք, իսկ Արցախն այսօր հակաահաբեկչական պայքարի կիզակետում է...

4 օրյա պատերազմ. հրադադարից 22 տարի անց

Հրադադարից 22 տարի անց, ապրիլի 2-ին, հաշված ժամերի ընթացքում Արցախում վերսկսվեց պատերազմը: Հակառակորդը ձեռնարկել է բացահայտ հարձակողական գործողություններ ղարաբաղա-ադրբեջանական սահմանի ողջ երկայնքով՝ այլ զինատեսակների հետ միասին օգտագործելով հրետանի, զրահատեխնիկա եւ օդուժ:

Հատկապես լարված էր հարավում եւ հյուսիսում՝ Հադրութում եւ Մարտակերտում: Հրետակոծվեցին Մարտակերտի շրջանի Թալիշ, Տոնաշեն եւ Մատաղիս գյուղերը, որի արդյունքում երեք գյուղերի բնակիչները տարհանվեցին:

Մինչեւ ապրիլի 2-ի կեսօրը հայկական կողմը հայտնեց առաջին զոհի մասին՝ 12 ամյա մարտունեցի դպրոցական Վաղինակ Գրիգորյանը, ով իր եղբայրների եւ ընկերոջ հետ դպրոցի ճանապահին էր, երբ 08:30-ի սահմաններում ՄՄ-21 («Գրադ») կայանքից իրականացրած հրթիռահրետակոծության արդյունքում զոհվեց, իսկ եղբայրներից մեկը եւ ընկերը վիրավորվեցին:

Այդ ընթացքում արդեն Արցախ էին տեղափոխվում հարյուրավոր կամավորականներ Հայաստանի տարբեր հատվածներից: Հակամարտության երկրորդ օրը նրանք արդեն մեկնում էին ճակատային գիծ:

Պատերազմը շարունակվում է. ադրբեջանական կողմի կորուստների մասին հայտնի են դառնում նոր տվյալներ: Երրորդ օրը ԼՂՀ ՊԲ-ն հայտնում է դիրքեր եւ բնագծեր գրավելու մասին: Հառակորդը կիրառում է SOU ծանր հրետանային համակարգ, օրվա վերջում ադրբեջանական կողմի կորուստները հասնում է 29 տանկի, 4 անօդաչու սարքի:

Երեկոյան ԼՂՀ ՊԲ-ն հայտնեց ադրբեջանցի մոտ 200 սպանվածի մասին: Նույն օրը երեկոյան ՀՀ անվտանգության խորհրդի նիստի ժամանակ նախագահ Սերժ Սարգսյանը հայտնեց հայկական կողմի կորուստների մասին՝ 18 զոհ, 35 վիրավոր:

Ղարաբաղի զինվորական եւ քաղաքային հիվանդանոցներ են տեղափոխում հարյուրավոր վիրավորներ:

Պատերազմի երրորդ օրը հրետակոծվեցին Մարտունի եւ Մարտակերտ քաղաքները: Մարտակերտում ավերվեց 20 տուն, Մարտունիում վիրավորվեց մեկ քաղաքացի:

Ադրբեջանական լրատվամիջոցները միաբերան գրում էին, որ գրավել են Թալիշ գյուղը, սակայն Թալիշը գտնվում էր հայկական զորքերի հսկողության տակ: Նշվեց, որ նախօրեին դիվերսիոն խումբ է մտել Թալիշ, գնդակահարել եւ խոշտանգել գյուղի վերեւում գտնվող առաջին տան տարեց 3 բնակիչներին: Դիվերսիոն խումբը շուտով ոչնչացվել է:

Պատերազմի 4-րդ օրը ՊՆ խոսնակը հայտարարում է, որ հայկական զինուժի հրետակոծությունից փախչող ադրբեջանցիներին կրակում են թիկունքից:

Հայկական կողմը հայտնում է նաեւ 26 անհայտ կորածների մասին:

Ապրիլի 5-ի ԼՂՀ ՊԲ տվյալներով՝ հայկական կողմն ունեցել է 29 զոհ (7 սպա եւ ենթասպա, 22 սերժանտ, շարքային, պայմանագրային զինծառայող) եւ 101 վիրավոր (20 սպա եւ ենթասպա, 81 սերժանտ, շարքային, պայմանագրային զինծառայող):

➔ 2

ԽՈՍՔ ՑԱՎԱԿՑՈՒԹՅԱՆ

ՀՅԴ Արցախի կառույցը իր խորին վշտակցությունն է հայտնում Ադրբեջանի կողմից վերջին օրերին հրահրված պատերազմում ՀՀ եւ ԼՂՀ սահմանների համար նահատակված զինծառայողների, ինչպես նաեւ հակառակորդի գնդակի զոհ դարձած խաղաղ բնակիչների ընտանիքներին ու հարազատներին:

ՀՅԴ Արցախի կառույցը կիսում է կորստյան մեծ ցավը եւ հավաստիացնում, որ ողջ ներուժով զորավիգ է հայ զինվորին, հայ մարդուն ու հայրենիքի պաշտպանությանը:

4 օրյա պատերազմ. հրադադարից 22 տարի անց

1 ← Ադրբեջանի ԶՈՒ մարդկային կորուստները մի քանի հարյուրի են հասնում: Լրագրողներին ներկայացվեց գաղտնի ձայնագրություն, որտեղ խուճապահար ադրբեջանուհին պատմում էր ԼՂՀ սահմանին մոտ գտնվող քաղաքների հոսպիտալներում տիրող վիճակի, դատարկված սահմանամերձ գյուղերի, բանակում առկա խուճապի մասին: Կինը շարունակ կրկնում էր, որ պետք չէ հավատալ հեռուստացույցին, որով «1000 կորուստից միայն 1-ն է ներկայացվում»:

ՊԲ-ն կորցրել է 14 տանկ, իսկ Ադրբեջանի ԶՈՒ-ն՝ 24 տանկ, նաեւ 4 ՀՄՄ (հետեւակի մարտական մեքենա), 1 ինժեներական տեխնիկա, 2 ուղղաթիռ, 12 ԱԹՍ (անօդաչու թռչող սարք), 1 «Գրադ» կայանք:

4-օրյա թեժ բախումներից հետո ապրիլի 5-ին երկու կողմերը հրադադարի պայմանավորվածություն ձեռք բերեցին՝ կրակոցները չլռեցին, սակայն ծանր զինտեխնիկա հիմնականում չէր օգտագործվում:

Հրադադարի համաձայնությունից հետո միայն Ստեփանակերտ ժամանեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները: Մինչ այդ, լրագրողների հետ հանդիպման ընթացքում ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը հայտարարեց, որ Ստեփանակերտը պետք է բանակցությունների կողմ դառնա, այլապես հարցը չի կարող խաղաղ լուծում ստանալ:

Համանախագահների հետ բանակցությունների ընթացքում էլ Արցախի երկինքը հանգիստ չէր: Հանդիպումների ժամանակ Ստեփանակերտի մատույցներում խոցվել է ադրբեջանական անօդաչու սարք, որի ձայները լսել են նաեւ համանախագահները: Խոստացել են Երեւանում հանդիպել լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ եւ համապատասխան հայտարարություններ անել, սակայն այդպես էլ որեւէ շոշափելի հայտարարություն չեղավ:

Ապրիլի 8-ին Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ներկայացուցիչները ժամանել են Լեռնային Ղարաբաղ, շփման գիծ՝ հակամարտության մասնակիցների մահացածների մարմինները որոնելու համար:

Փոխանակման ընթացքում հայկական կողմին են փոխանցվել ԼՂՀ Պաշտպանության բանակի զոհված 18 զինծառայողների խոշտանգված մարմինները:

Քառօրյա պատերազմի արդյունքում հայկական կողմն ունի 74 զոհ, իսկ ադրբեջանական կողմը հայտնել է միայն իր 96 զոհվածների մասին, ոչ պաշտոնական տվյալների համաձայն՝ Ադրբեջանն ունի մոտ 2500 զոհ:

Անհրաժեշտ է կազմաքանդել «Մադրիդյան սկզբունքները» եւ հրապարակ բերել նոր սկզբունքներ

Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո կրկին ակտիվացել են խոսակցությունները ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից ներկայացված «Մադրիդյան սկզբունքներ» անվանումը ստացած փաստաթղթի մասին: Այն պաշտոնապես կողմերին է ներկայացվել 2007 թվականին, դրան հաջորդող տարիներին ենթարկվել է որոշակի փոփոխությունների եւ համարվում է բանակցային գործընթացում առկա վերջին պաշտոնական փաստաթուղթը:

ՀՅԴ ԿԿ ներկայացուցիչ, ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանը, անդրադառնալով վերոնշյալ սկզբունքներին, նշել է, որ 2007 թ. դրանց հրապարակումից հետո բազմիցս ՀՅԴ Արցախի կառույցն անդրադարձել է այդ հարցին՝ հայտարարելով, որ այդ սկզբունքները չեն բխում ոչ միայն Արցախի Հանրապետության, այլեւ հայ ժողովրդի եւ Հայոց պետականության շահերից:

«Մենք տարբեր առիթներով ասել ենք, որ պետք է ընդհանրապես կազմաքանդել այդ սկզբունքները եւ հրապարակ բերել նոր սկզբունքներ: Մեզ համար անընդունելի են այն կետերը, որի շուրջ բանակցում են կողմերը: Կարեւոր է առանձնացնել եւս մեկ հանգամանք. առանց Արցախի Հանրապետության ուղղակի համաձայնության՝ որեւէ փաստաթղթի, որեւէ սկզբունքի ընդունում չի կարող մեզ համար ընդունելի լինել: Ըստ այդմ, անհրաժեշտ է ԼՂՀ-ի ներգրավվածությունը բանակցային գործընթացին»,- նշել է Դավիթ Իշխանյանը:

Անդրադառնալով Արցախում միջազգային խաղաղապահ ուժեր տեղակայելու քննարկումներին՝ Իշխանյանը նշեց, որ 25 տարիների ընթացում Արցախը կարողացել է իր առջեւ դրված խնդիրներն ինքնուրույն լուծել, ու Արցախում խաղաղապահ ուժերի տեղակայման խնդիր այսօր չկա:

«Ղարաբաղյան հակամարտությունը տարբերվում է այն բոլոր հակամարտության գոտիներից, որտեղ կիրառվել կամ կիրառվում են խաղաղապահ ուժեր: Մենք բավարար հնարավորություն ունենք սահմանի ամբողջ երկայնքով Արցախի եւ Արցախի ժողովրդի անվտանգությունն ապահովելու, եւ միջազգային փորձը ցույց է տվել, որ խաղաղապահ ուժերի տեղակայումը դեռ չի կարող երաշխիք լինել խաղաղության պահպանման համար»:

Կարեւոր է նաեւ գիտակցել, որ քառօրյա պատերազմից հետո ստեղծվել է բոլորովին նոր իրավիճակ, եւ Ադրբեջանի կողմից 1994 թվականի հրադադարի ուղղակի խախտմամբ այդօրինակ մասշտաբով թելադրում են նոր սկզբունքների շուրջ քննարկումներ սկսել:

Դավիթ Իշխանյանը նշեց նաեւ, որ քառօրյա պատերազմը ցույց տվեց, որ մեր ժողովրդի անվտանգության հիմնահարցերը լիովին լուծված չեն, մասնավորապես՝ Արցախի հյուսիսային շրջանում եւ կենտրոնական հատվածներում. «Մարտակերտի շրջանի հյուսիսային հատվածը եւ Մարտունի շրջկենտրոնը դեռեւս ամբողջական անվտանգության բաղադրիչներով չեն ապահովված, եւ կարեւոր է գիտակցել, որ այդ տարածքներն անխոցելի դարձնելու համար մեզ անհրաժեշտ է ժողովրդի անվտանգությունն ապահովող եւ երաշխավորող ավելի ընդլայնված տարածք ունենալ: Կարծում եմ՝ այս ուղղությամբ ոչ միայն պետք է մտածել, այլ կոնկրետ քայլեր ձեռնարկել»:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Ով առաջին գծում գտնվելու հնարավորություն չունի, պետք է նյութական օժանդակությամբ մասնակից դառնա հայրենիքի փրկությանը

Yerkir.am-ի հետ զրույցում ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը ներկայացրեց Արցախում տիրող իրավիճակը եւ անդրադարձավ ՀՅԴ պատվիրակության ու ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հանդիպմանը: Նա նշեց, որ Բակո Սահակյանի հետ զրուցել են սահմանին տիրող իրավիճակի, վերջին մեկ շաբաթում արձանագրված իրադարձությունների մասին:

«Պարզ է, որ Ադրբեջանն ամբողջ ուժերով համընդհանուր հարձակում է գործել, եւ հստակ է՝ նա չի կարողացել իր առջեւ դրված ծրագիրն իրականացնել, ձախողել է: Մենք ոչ մի տարածք չենք կորցրել: Այդ առումով՝ մերը հաղթանակ է: Սա պետք է արձանագրվի որպես հաղթանակ: Իհարկե, հաղթանակը չի նշանակում վերջակետ, մի հանգրվանի վերջ: Պատերազմը կարող է եւ շարունակվել, մենք դրան պետք է պատրաստ լինենք»,- ասաց Մարգարյանը:

Ըստ նրա՝ Արցախում ժողովուրդը մարտական է տրամադրված, չի ընկճված եւ պետք է ամեն ինչ արվի, որ դա պահպանվի: «Կարծում եմ՝ ով Ղարաբաղում առաջին գծում գտնվելու հնարավորություն չունի, նյութական իր օժանդակությամբ պետք է մասնակից դառնա հայրենիքի փրկության, հայրենիքի պաշտպանության այս գործին: Մենք պետք է միաժամանակ պատրաստ լինենք նոր հարձակումների դիմագրավելուն, պետք է կառուցենք, վերաշինենք այն, ինչ ավերվել է Մարտակերտում, Թալիշում, Մատաղիսում: Դրա մեջ է մեր փրկությունը: Մեր զոհերը թանկ զոհեր են, բայց իմաստավորված է այդ զոհաբերությունը, որովհետեւ մենք պատվով ենք դուրս եկել: Անհավասար ուժեր են եղել, նրանք տեխնիկապես ավելի պատրաստված են: Հավանաբար, նավթի դոլարներն օգնել են, որպեսզի հնարավորություններ ձեռք բերեն, բայց մեկ է՝ ծրագրածը չեն հաջողել»,- ասաց ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչը:

Խոսելով այս օրերին միջազգային հանրության արձագանքի մասին՝ Հրանտ Մարգարյանը կարծիք հայտնեց, որ առաջիկա օրերին ավելի մեծ արձագանքներ կարող են լինել, քանի որ Ադրբեջանը պատերազմական հանցագործություն է կատարել՝ բավական չէ, որ նախահարձակ է եղել, նաեւ արգելված զենքեր է օգտագործել, անմարդկային միջոցների դիմել:

«Իբրեւ պատերազմական հանցագործ՝ Ադրբեջանն այսօր ամբաստանյալի աթոռին է նստած»,- ասաց նա:

Անդրադառնալով այն հանգամանքին, որ՝ չնայած ձեռք բերված պայմանավորվածությանը, Ադրբեջանը շարունակում է խախտել հրադադարի ռեժիմը եւ կրակում է ոչ միայն Ղարաբաղի ուղղությամբ, այլ նաեւ՝ Հայաստանի, Մարգարյանը նշեց. «Այդ ամենը պետք է զսպվի՝ համապատասխան պատասխան տալով: Հանրային, միջազգային կարծիքի ձեւավորման գործում պետք է կարողանանք ակտիվ գործունեություն ծավալել, պետք է հարցերն անընդհատ արծարծված պահենք, ճնշենք Ադրբեջանին նաեւ քարոզչական, դիվանագիտական մակարդակում, որ նրանք պարտավորված լինեն նահանջ արձանագրել»:

yerkir.am

Վահրամ Բալայան. Չի կարելի հույս դնել այս կամ այն երկրի վրա

«Ապառաժ»-ի թղթակիցը քառօրյա պատերազմի, դրա հետեւանքների մասին խոսել է ԼՂՀ ԱԺ փոխնախագահ, Արցախի ԿԿ անդամ Վահրամ Բալայանի հետ:

- Զինադադարից 22 տարի անց տեղի ունեցած 4-օրյա պատերազմը բոլորի համար անսպասելի էր: Եւ հիմա հաճախ է խոսվում թե՛ մեր բացթողումների, թե՛ առավելությունների մասին: Ի վերջո, ո՞րն էր այն ամենամեծ դասը, որ քաղեցինք քառօրյա պատերազմից:

- Այս պատերազմական գործողությունները ցույց տվեցին մեր առավելությունները, նաեւ՝ խոցելի կողմերը: Գործնականորեն ապացուցվեց, որ հայկական բանակը տարածաշրջանում ամենահզոր ու կազմակերպված զորքն է: Այն հույսը, որ հանրությունը կապել էր այդ ուժի՝ 18-19 տարեկան երիտասարդների հետ, արդարացվեց: Կարելի է նույնիսկ ռազմարվեստի ասպարեզում բացառիկ դեպքեր նշել, երբ սահմանում 30-40 հոգանոց ջոկատը դիմագրավել է թշնամու՝ թվով մի քանի հազարի հասնող ուժերին: Հայ զինվորն իր բարձրության վրա գտնվեց, մեր բանակի շնորհիվ երկրի սահմաններն անխաթար մնացին:

Երկրորդն այն է, որ հայ հանրությունը նորից ապացուցեց, որ միասնական է: Տարիներ շարունակ շրջանառվում էր այն գաղափարը, որ հերթական պատերազմ լինելու պարագայում համայն հայությունը մեկ բռունցք չի դառնա, քանի որ մի մասն ինչ-ինչ պատճառներով հուսախաբված է: Բայց մի քանի օրվա ռազմական գործողություններն ապացուցեցին, որ համայն հայությունը միասնական է, եւ չդադարող կամավորների հոսքն էլ դրա վառ ապացույցն էր: Կամավորներ եկան ՀՀ տարբեր մարզերից, ինչպես նաեւ՝ աշխարհի տարբեր ծայրերից մեր հայրենակիցները պատրաստակամություն հայտնեցին դառնալ հայրենիքի զինվոր: Վերջին օրերին Արցախ հասնող մեծ նյութական աջակցությունը, պատերազմի առաջին օրից ի վեր աշխարհի բոլոր անկյուններում տեղի ունեցող ցույցերը խոսում են այն մասին, որ համայն հայությունն ունի մեկ գերխնդիր: Արցախյան հարցը, ըստ էության դարձել է Հայկական Հարցի, Հայ Դատի մի անբաժանելի մասը. դա գիտակցում է ամեն մի հայ՝ անկախ նրա բնակության վայրից: Թե՛ ԼՂՀ, թե՛ ՀՀ քաղաքական ուժերը պարտավոր են այս նոր ձեւավորված իրավիճակն օգտագործել՝ ի շահ Հայաստանի, որովհետեւ մեզ առաջիկայում դեռ շատ փորձություններ են սպասվում: Եվ այդ ամենը մենք կարող ենք հաղթահարել միայն ու միայն համատեղ, միասնական ուժերի միջոցով:

Վերջին երեք օրերի իրադարձություններն ապացուցեցին, որ բուն ԼՂՀ-ում ազգաբնակչությունը բավականին կազմակերպված եւ միասնական է: Այն ասեկոսությունները, որ երեկվա զինվորն այսօր չի ցանկանա նորից խրամատ մտնել՝ հօդս ցնդեց: Մեր զինվորներն ու ազատամարտիկներն ապացուցեցին, որ հանուն հայրենիքի անվտանգության կարող են մի կողմ դնել բոլոր տարաձայնությունները եւ մոռանալ ցանկացած խնդիր:

Խոսելով մեր բացթողումների մասին՝ պետք է նշեմ, որ պետք է լրջագույն աշխատանք կատարենք ժամանակակից զենքեր ձեռք բերելու տեսանկյունից: Վերջին տարիներին Ադրբեջանի միլիարդների հասնող ռազմական ներդրումները, ըստ էության, նրանց ավելի հավակնոտ ու ագրեսիվ է դարձրել: Դա ոչ թե վիատվելու, այլեւ մեզ լուրջ հետեւություններ անելու է մղում: Պետք է երկրի ներուժն ամբողջությամբ նպատակաուղղենք նոր ռազմական տեխնիկա ձեռք բերելուն:

- Ի՞նչն է պատճառը, որ հայկական կողմը նոր զինտեխնիկա ձեռք չի բերել, կամ էլ համեմատաբար քիչ է ձեռք բերել, մանավանդ, որ Ադրբեջանը երբեք գաղտնի չի պահել, որ զինում է իր բանակն առավել ժամանակակից զինտեխնիկայով:

Սխալ է ասել, որ վերջին 25 տարիներին ձեռք չենք բերել նոր ռազմական տեխնիկա: Այսօր մեր հրետանին, մեր համազարկային միջոցները, տանկային միավորումները դրա մասին են խոսում: Սակայն այդքանը բավարար չէ, որովհետեւ մենք հավակնում ենք ոչ միայն Ադրբեջանի դեմ պայքարելուն, նրա ահաբեկչական գործողությունները սաստելուն, այլեւ ժամանակն է, որ ՀՀ-ն եւ ԼՂՀ-ն իրենց ռազմական ներուժի շնորհիվ դառնան թելադրող երկրներ: Մենք դրա համար ունենք պատրաստակամ մարդկային ռեսուրս, բարոյահոգեբանական բարձր պատրաստվածություն: Սա ամենամեծ առավելությունն է, որ մյուս երկրները չունեն: Այդ ամենը պետք է համակցվի ավելի արդիական զինատեսակների հետ:

- ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը նշել, է, որ մենք երբեք դեմ չենք եղել խաղաղապահ զորքերի տեղակայմանը: Որքանո՞վ են հուսալի խաղաղապահ զորքերը եւ որքանո՞վ է հուսալի մեր ռազմական գործընկեր Ռուսաստանը:

- Ինձ թվում է, որ վերջին տարիների փորձը ցույց է տվել, որ չի կարելի հույսը դնել այս կամ այն պետության վրա, կամ ընդունել այս կամ այն երկրի հովանավորությունը: Դրանք խաբկանք են: Դրանք ժամանակավոր են, եւ վստահելի չեն: Ժողովուրդն այս ամենը գիտակցում եւ ընկալում է, եւ դա ճիշտ է: Ընդհանրապես, պատմության բոլոր ժամանակահատվածներում, երբ հույսը դրել ենք մեր ուժի վրա, մենք հաջողել ենք: Եվ ոչ հեռավոր անցյալի՝ 1992-1994թթ. իրադարձություններն ապացուցեցին, որ փոքր զինական ուժով, բայց մեր ժողովրդի եռանդով, հայրենասիրությամբ մենք կերտեցինք մեր հաղթանակը: Մենք հույս չունենք, որ այս կամ այն երկիրը, այդ թվում՝ Ռուսաստանը, մեր հարցերին լուծումներ է տալու:

- Քառօրյա պատերազմի արդյունքում հայտարարվել է մոտավոր երկու տասնյակ հայ զինվորների խոշտանգված մարմինների մասին: ԼՂՀ-ն այս հարցով կդիմի՝ Հաագայի դատարան:

- Մենք հենց առաջին օրվանից ԱԺ-ում ստեղծել ենք համապատասխան հանձնախումբ: Միաժամանակ նաեւ իրավասու մարմինների հետ ծավալուն աշխատանքներ է կատարվում, որպեսզի այդ փաստահավաք գործողությունները կատարվեն: Այդ ամենը պետք է փորձենք դնել միջազգային գործող օրենքների շրջանակներում: Առաջին իսկ հայացքից՝ բնականաբար հասկանալի է, որ սա ահաբեկչական պատերազմական գործողություն էր Ադրբեջանի կողմից: Միեւնույն ժամանակ, դա նաեւ մարդկության նկատմամբ հանցագործություն է: Այդ ամենը մեզ մտածելու տեղիք է տալիս: Եղած նյութերը պետք է ներկայացվի միջազգային ատյաններին եւ ցույց տրվի Ադրբեջանի իսկական դեմքը: Ցավոք սրտի, ժամանակի ընթացքում Ադրբեջանն իր լոբբիստական աշխատանքի, նավթադոլարների միջոցով ստեղծել է քաղաքական կեղտոտ գործիչների շրջանակ, որոնք անընդհատ պաշտպանում են այդ երկրին: Մենք պետք է նորից աշխարհի աչքերը բացենք: Կարծում եմ՝ այս վերջին օրերի տեղեկատվական դաշտում որոշակի տեղաշարժ է կատարվել: Կարծես աշխարհը նորից սթափվում է եւ հասկանում, թե իրապես ինչ է կատարվում այս տարածաշրջանում: Մենք բոլոր ճակատներով պետք է ծավալուն եւ նպատակային աշխատանք կատարենք: Նման գործելաոճով կհասնենք հաջողության:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Մեր զինվորները, հրամանատարությունը եւ պաշտպանության բանակը փայլուն կատարել է իր առջեւ դրված խնդիրը. Ա. Աղաբեկյան

ԼՂՀ փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանի հարցազրույցը Արցախի հանրային հեռուստատեսությանը

- Ինչպե՞ս կորակեք այս պահին Արցախում տիրող իրավիճակը:

- Այսօր մենք աշխատում ենք ռազմական դրության համապատասխան կարգով: Մեր երկիրն ունի նման մշակված պլան: Եթե համեմատենք նախորդ ռազմական գործողությունների հետ, երբ պետություն չենք ունեցել, բայց ստիպված ենք եղել ունենալ բանակ, այսօր մեր բանակն իր թիկունքում ունի պետություն, ունի ստորաբաժանումներ, եւ այդ ստորաբաժանումները գործում են ըստ համապատասխան պլանի:

Մենք գիտենք, թե ով որ պահի ինչ անելիքներ ունի: Ռազմական դրության շրջանակում շարունակվում է արտադրությունը, կարի արտադրությունները շարունակում են անհրաժեշտ հանդերձանք կարել զինված ուժերի համար: Կառավարությունում գործում է շտաբ, որը համակարգում է օժանդակությունը զինված ուժերին, այդ թվում՝ ապահովում է մեր հայրենակիցների հետ կապը: Շտաբը գործում է շուրջօրյա ռեժիմով, շարունակում է ընդունել զանգեր ու պահպանել պաշտպանության նախարարության հետ կապը: Ինժեներական ծառայությունների ուղղությամբ՝ քաղաքաշինության նախարարությունը շարունակում է կատարել իր պարտականությունները:

- Որքանո՞վ էր անակնկալ վերսկսված պատերազմը հայկական կողմի համար:

Ուզում եմ օգտվել առիթից եւ նշել հետեւյալը. ի՞նչ անակնկալի մասին է



խոսքը, երբ մեկ տարուց ավելի է՝ մենք տեսնում ենք, թե հակառակորդն ինչպես է ակտիվացնում կրակն առաջնագծում, ինչպես են տեղաշարժվում դիպուկահարները, ինչպես է ամբողջ ճակատի երկայքով օգտագործվում հրետանին: Սրանք գործողություններ էին, որոնք մեր զինված ուժերի համար տեսանելի էին: Մի օր պետք է սա տեղի ունենար: Մենք պետք է այս ամենը որակենք որպես պլանային գործողություն, որը չի հաջողվել ավարտին հասցնել: 1994-ին՝ զինադադար հայտարարելուց հետո, Ադրբեջանն ունեցել է կազմաքանդված բանակ: Այս տարիների ընթացքում հնարավորություն է ունեցել ե՛ւ բանակ ստեղծելու, ե՛ւ նոր սպառազինություն ձեռք բերելու: Միաժամանակ շարունակել է ճնշում գործադրել՝ լկտիաբար խախտելով զինադադարի պայմանները: Փակելով միջազգային հանրության աչքերը՝ կարողացել է անցնել լայնամասշտաբ պատերազմական գործողությունների:

- Այսինքն՝ մենք այս օրվան պատրաստվո՞ւմ էինք տարիներով:

- Հավատացեք՝ այո: Ի՞նչ է արել մեր հակառակորդը: Հակառակորդի զինված ուժերը, ամբողջ բանակը՝ նախագահի գլխավորությամբ, պլանավորած գործողություն է սկսել ԼՂՀ սահմանների երկայնքով եւ իրականացրել ընդամենը դասակի, վաշտի խնդիր: Երեք օր հակառակորդը փորձում էր լուծել վաշտի խնդիր՝ վերցնելով ընդամենը ջոկի հենակետ, եւ ռմբահարվելով՝ չկարողացավ զարգացնել առաջխաղացումը: Մեր ժողովուրդը պետք է իմանա այս մասին: Այսօր աշխարհը ծիծաղում է այդ բանակի վրա: Եվ պետք է առիթից օգտվել ու շնորհավորել մեր ժողովրդին այս հաղթանակի առթիվ:

- Պրն Աղաբեկյան, կարծում եք, որ սա վերջի՞ն դասն է լինելու նրանց համար:

- Ոչ, մենք իրավունք չունենք այդպես մտածելու: Մենք պետք է համարենք, որ մեր հակառակորդը չի լուծել իր խնդիրը 1992-ին, եւ չի լուծել նաեւ այս անգամ: Ցավոք սրտի, Ադրբեջանի հասարակությունը չի գիտակցում այս պարտությունը:

→4

Մեր զինվորները, հրամանատարությունը եւ պաշտպանության բանակը փայլուն կատարել է իր առջեւ դրված խնդիրը. Ա. Աղաբեկյան

3 ← **- Դուք կոփվել եք նախկին պատերազմում, եւ, որպես ազատամարտիկի, կուզեմ հարցնել՝ Դուք որակական տարբերություն տեսնո՞ւմ եք այս եւ անցած պատերազմի միջեւ**:

- Սկսած այն ժամանակներից, որ պատերազմը սրով ու վահանով էր, եւ մինչեւ այսօր, երբ աշխարհը խոսում է մեծ ու գլոբալ պատերազմների մասին, շատ մեծ տարբերություն չկա: Պատերազմի ամբողջ ընթացքում թիրախը մարդն է: Եվ պիտի գիտակցես, որ մարդուժի ոչնչացումով ես դու հասնում հաղթանակի: Եթե այս տեսանկյունից ես նայում, ապա մեծ տարբերություն չկա: Այն ժամանակ եւ հիմա հրամանատարը խնդիր ունի իր կամքը պարտադրել իր ենթականերին եւ հակառակորդին: Այդ դեպքում է միայն մարտն ավարտվում հաղթանակով: Մարտավարության կանոնները բոլոր ժամանակներում էլ մնում են նույնը: Նախկին շրջանում ռազմական գործողությունները վարելիս՝ մենք ունեինք հասարակություն, որտեղ ամեն մեկն իրեն զինվոր էր զգում, եւ զգում էր ոչ միայն հոգով, այլեւ մասնակցությամբ: Այն ժամանակ մարդկային ռեսուրսների սահմանափակում ունեինք, եւ ստիպված էր մի ազատամարտիկը մի քանի ազատամարտիկի խնդիր կատարել: Հիմա ունենք կանոնավոր բանակ:

- Ի՞նչ կասեք մի քանի ժամվա ընթացքում տեղի ունեցած մասնակի զորահավաքների մասին:

- Աննախադեպ բան տեղի ունեցավ 3 օրվա ընթացքում: Որոշում կայացվեց, որպեսզի անցկացվի մասնակի զորահավաք: 1995-ից հետո հարյուրավոր զորավարժություններ ենք անցկացրել, բանակը տարին առնվազն 2 անգամ զորահավաք է անցկացրել՝ սպասվող ապագա մարտերին զորահավաքները գրագետ կազմակերպելու համար: Վերջին 3 տարիներին ես հաճախ ականատես եմ եղել տարբեր դժգոհությունների, երբ թ՛ե բանակի գործողություններն էին արժանանում քննադատության, թ՛ե զորահավաքի կազմն էր արժանանում քննադատության, երբ չկամությամբ էին մասնակցում այդ զորավարժություններին: Բայց գիտակցելով, որ ընթանում է ռազմական գործողություն, չնայած հայտարարված մասնակի զորահավաքին՝ բոլորն եկան. շատերին ստիպված հետ ուղարկեցին:

- Պրն Աղաբեկյան, այսօր շատ է խոսվում Ադրբեջանի կողմից գրավված հեռակետերի մասին: Ի՞նչ ռազմավարական նշանակություն ունեն դրանք:

Ես արդեն նշեցի, որ ընդամենը վաշտի խնդիր կատարեց: Եվ 3-4 դիրք հիմա գտնվում է հակառակորդի վերահսկողության տակ, բայց ընդամենը ջոկի նշանակության դիրքեր: Այդ դիրքերը իրենց նշանակությունն ունեն 500 մետր խորության մեջ, 500 մետր խորությունից հետո իրենց նշանակությունը կորցնում են, որովհետեւ ջոկի թիկունքում կա դասակի հենակետ, որն ունի ավելի մեծ խորության խնդիր՝ 1,5 կմ, 2 կմ: Օգտվեմ առիթից եւ ժողովրդին ասեմ, որ ռազմավարական դիրքը նշանակում է մի անբողջ լեռնաշղթա, ռազմավարական մեծ ճանապարհներ, եւ միայն դրանց վրա վերահսկողությունը կորցնելուց հետո կարող ենք խոսել մասնակի պարտության մասին: Բայց, երբ հակառակորդն ընդամենը 3 ջոկի դիրքի է տիրապետում, դա ռազմավարական նշանակություն չունի: Ամենահզոր զենքը մարդն է, եղել եւ մնում է այն զինվորը, որն իր կամքը կարողացել է պարտադրել թշնամուն: Այս հաղթանակի գրավականը մեր զինվորի կամքի պարտադրումն էր թշնամուն: Առաջին վայրկյաններին, այո, թերություններ ունեցանք, հակառակորդը կարողացավ մեր ջոկի դիրքերը վերցնել, ցավոք, զոհեր ունեցանք: Բայց ես ուզում եմ բարձրաձայնել, որ մենք մարտական խնդիրը կատարել ենք, մեր զինվորները, հրամանատարությունը եւ պաշտպանության բանակը փայլուն կատարել է իր առջեւ դրված խնդիրը:

Գնահատենք նաեւ հետեւյալը, որ մեր քաղաքացիները բացառիկ սառնասրտություն ցուցաբերեցին: Շատ երկրներ կերազեն, որ իրենց ժողովուրդն այսպիսի սառնասրտությամբ ընդունի պատերազմի մարտահրավերը: Ականատեսը եղանք հանուն հաղթանակի բացառիկ համախմբման:

- Ի՞նչ ակնկալենք պայմանավորված զինադադարից :

- Տարբեր ակնկալիքներ պետք է ունենանք: Բանակը պետք է իմանա, որ իր մարտական խնդիրը չի փոխվել, պետք է շարունակի պաշտպանություն իրականացնել: Կառավարությունը պետք է շարունակի այս ռեժիմով աշխատել, քանի որ՝ այն բացերը, որոնք առաջացել են ռազմական գործողությունների հետեւանքով, չեն փակվել: Եվ պիտի համարենք, որ՝ քանի այս հրադադարը, այս ժամանակավոր հրադադարը չի վերածվել խաղաղության պայմանագրի, մեր երկիրը պետք է ամեն օր պատրաստվի պատերազմի, որով պարտադրելու ենք թշնամուն խաղաղություն: Այս փորձությամբ Ադրբեջանը հասկացավ, որ ո՛չ ռազմական գործողություններով, ո՛չ շրջափակումով, ո՛չ տեղեկատվական պատերազմով չի կարողանա կոտրել մեր ժողովրդի կամքը:

Հայաստանը չի երկնչելու մտնել պատերազմի մեջ

ԵՀԿ անդամ երկրների դեսպանների հետ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հանդիպումը եւ նրանց հղված ուղերձները ոչ միայն գնահատականներ են պարունակում ղարաբաղա-ադրբեջանական սահմանագծին ապրիլի 1-ից ստեղծված իրադրության վերաբերյալ, այլեւ բացահայտում են հիմնահարցի կարգավորման առումով հայկական կողմի դիրքորոշումների էական փոփոխությունները:

Առաջին կարեւոր ուղերձը միջազգային հանրությանն ուղղված՝ նկատելիորեն կոշտ մեղադրանքն էր Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականության եւ բանակցային գործընթացից փաստացի միակողմանի հրաժարվելու իրողության հանդեպ մինչեւ այսօր անտարբերություն ցուցաբերելու համար: Ելնելով նրանից, որ պաշտոնական Բաքուն արդեն խոստովանել է, որ ինքն է նախահարձակ եղել, նախագահը պահանջեց դրա համար բացատրություններ պահանջել Բաքվից: Բայց լոկալ պատերազմի ընթացքի պարագայում դա արդեն գրեթե եղանակ չի ստեղծում. բոլորը հստակ գիտեն, որ այս արկածախնդիր քայլի նախաձեռնողը Ադրբեջանն է: Երկրորդ՝ հետագա ցանկացած գործընթաց կառուցվելու է ոչ թե 1994թ. հրադադարի, այլ 2016թ. ապրիլի 1-ին վերսկսված լայնածավալ ռազմական գործողությունների արդյունքներով:

Ռազմական գործողությունների հանդեպ ԵԱՀԿ ՄԽ համանախագահող երկրների փաստացի կրավորական մոտեցումը եւ կրակը դադարեցնելու՝ երկու կողմերին ուղղված նրանց հերթապահ հայտարարությունները ցույց են տալիս, որ մեծ հաշվով ոչ թե իրավիճակը հնարավորինս արագ կայունացնելու, այլ ռազմական գործողությունների արդյունքում կողմերից որեւէ մեկի տակտիկական պարտությունը բանակցությունների նոր մեկնարկ դարձնելու նպատակ ունեն: Այսինքն՝ առաջնորդվում են այն սկզբունքով, որ ստատուս քվոյի որոշակի փոփոխությունը՝ անկախ նրանից՝ կողմերից որի օգտին կլինի, դարձնել բանակցությունները վերսկսելու նոր մեկնակետ:

Երկրորդ ուղերձն այն էր, որ եթե միջազգային հանրությունը որեւէ քայլ չձեռնարկի Ալիեւին ուշքի բերելու համար, ապա Հայաստանը ճանաչելու է ԼՂՀ-ի անկախությունը եւ անմիջականորեն մտնելու է պատերազմի մեջ ԼՂՀ-ի անվտանգությունն ապահովելու նպատակով: Դա ոչ միայն նշանակում է դուրս գալ բանակցություններից եւ սկսել լայնածավալ պատերազմ ԼՂ-ի համար, այլեւ նախադրյալներ ստեղծել դրանում տարածաշրջանային երկրների ներքաշման համար, այսինքն՝ պատերազմին առնվազն տարածաշրջանային մասշտաբներ հաղորդել: Ընդ որում՝ նախագահը հասկացրեց, որ սա արդեն գործողության մեջ գտնվող քաղաքականություն է, քանի որ արդեն ԱԳՆ-ին հրահանգել է ԼՂՀ-ի հետ ռազմական փոխօգնության պայմանագիր մշակել, իսկ նման պայմանագրի ստորագրումը փաստացի ԼՂՀ-ն ճանաչելու իրավական քայլ է:

Երրորդ՝ Սերժ Սարգսյանը հասկանալի դարձրեց, որ, անկախ վերասանձազերծված պատերազմի ելքից, սա արդեն նոր ստատուս քվո է, եւ հիմնահարցի լուծումը պետք է նոր էջից սկսվի, որտեղ Ադրբեջանը պետք է ոչ թե Հայաստանի հետ բանակցություններ վարի, այլ Ստեփանակերտի: Այսինքն՝ արդեն հիմա, կտրուկ փոխելով կուրսը, Հայաստանը դնում է կարգավորման հետագա հնարավոր բանակցություններում թե՛ ԼՂՀ-ի պարտադիր ներգրավման եւ թե՛ ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքը ճանաչելու պահանջը:

Պարզ է, սակայն, որ միայն այդ մասին հայտարարությունը բավարար լինել չի կարող: Ինչպես միջազգային հանրությունը, այնպես էլ հատկապես Բաքուն դրան կհամաձայնեն միայն հարկադրաբար՝ հայկական բանակի այնպիսի առաջխաղացման, ռազմաճակատում ուժերի այնպիսի նոր դասավորություն սահմանելու պայմաններում, երբ Բաքուն ստիպված կլինի կա՛մ հայկական կողմին խնդրել կանգ առնել, կա՛մ, որպես միջանկյալ լուծում, սկսել բանակցությունները: Մինչեւ այդ հարցը ռազմաճակատում հայկական բանակը չլուծի, թե՛ բանակցություններում ԼՂՀ-ի ներգրավման եւ թե՛ առաջնահերթորեն ԼՂՀ-ի կարգավիճակի որոշման ուղղությամբ որեւէ տեղաշարժ սպասել չի կարելի:

Չորրորդ՝ Սերժ Սարգսյանը հայտարարեց, որ Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղը կողմ են ռազմական գործողությունների դադարեցմանը, 1994թ. զինադադարի ռեժիմին վերադառնալուն եւ բոլոր զորամիավորումների՝ մինչեւ 2016թ. ապրիլի 1-ի իրենց զբաղեցրած դիրքերն ու զորանոցները վերադառնալուն: Առաջին հայացքից թվում է, թե սա նահանջողական ուղերձ է եւ հակադրվում է նոր ստատուս քվո հաստատելու՝ նրա վերոնշյալ ուղերձի էությանը: Սակայն հարկ է ուշադրություն դարձնել, որ նախագահն այս առաջարկն անում է հայկական զինված ուժերի առաջխաղացման պայմաններում:

Թե՛ 1994թ. զինադադարի պայմանագրին վերադառնալու պատրաստակամության դրսեւորումը եւ թե՛ հակառակորդի ձեռքում դեռեւս ԼՂՀ մոտ 200 քմ տարածք լինելու մասին տեղեկացումը, թերեւս, պետք է դիտարկել միայն հիբրիդային պատերազմի դիվանագիտական գործիքի համատեքստում՝ որպես միջազգային հանրությանը հայկական կողմի խաղաղասիրությունը, կրակի դադարեցման կողմնակիցը լինելու հանգամանքը ներկայացնելու միջոց: Այլ կերպ ասած՝ սա կարող է դիվանագիտական-քարոզչական քայլ լինել՝ չեզոքացնելու համար նախօրեին Բաքվից արված այն անհիմն եւ կեղծ հայտարարության էֆեկտը, թե Ադրբեջանը միակողմանի դադարեցնում է ռազմական գործողությունները եւ ամրապնդվում իր «ազատագրած» նոր տարածքներում:

Նախկին հրադադարի պայմաններին եւ բնագծերին վերադառնալը գուցե երկարատեւ ու ռեսուրսատար մասշտաբային պատերազմից խուսափելու հեռահար նպատակ է հետապնդում: Թերեւս դրանով էր պայմանավորված նախագահի կողմից արված՝ զինադադարի հետաքննության մեխանիզմների շտապ ներդրման, ԼՂ հակամարտության հարցերով ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի մոնիտորինգային կարողությունների, շփման գոտում դաշտային օգնականների քանակի զգալի ավելացման առաջարկները: Եթե այդպես է, ապա չի կարելի բացառել, որ հայկական կողմի տակտիկական նպատակներից մեկը, գուցե՝ նվազագույնը, որով կարող է բավարարվել՝ ռազմական գործողությունները դադարեցնելու համար, այդ մեխանիզմների ներդրման ռազմաքաղաքական պայմանների ստեղծումը եւ Ադրբեջանին այս հարցում կառուցողականության դաշտ բերելն է: Համենայն դեպս, հիմա դիվանագիտությունը թելադրվում է արցախյան ռազմաճակատից, եւ այլ տարբերակ հայկական երկու պետությունները չունեն, քան թելադրողի կարգավիճակով հանդես գալը: Հակառակը կլինի վերջի սկիզբը:

Գեւորգ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Եվրախորհրդարանում կոչ են արել ճանաչել ԼՂՀ անկախությունը

Եվրախորհրդարանի՝ ապրիլի 12-ին կայացած լիագումար նիստում, ի թիվս այլ հարցերի, անդրադարձ է արվել նաեւ Ղարաբաղում ստեղծված իրադրությանը:

Ապրիլի 2-5-ը ղարաբաղա-ադրբեջանական սահմանին ծավալված պատերազմական գործողությունների վերաբերյալ ելույթով հանդես է եկել ԵՄ արտաքին հարաբերությունների եւ անվտանգության քաղաքականության հարցերով գերագույն հանձնակատար Ֆեդերիկա Մոգերինին: Նա մասնավորապես հայտարարեց. «Մենք մեծացնում ենք մեր ջանքերը հակամարտության կարգավորման նպատակով»: Ըստ Մոգերինիի, հակամարտությունը շարունակում է սպառնալիք հանդիսանալ տարածաշրջանային անվտանգությանը:

«Հարավային Կովկասը կարեւոր տարածք է Եվրոպայի համար», - նշեց Եվրամիության արտաքին քաղաքականության պատասխանատուն:

Ընդգծելով, որ հրադադարի խախտման ծավալներն աննախադեպ են 1994 թվականից հետո, Ֆեդերիկա Մոգերինին նաեւ ուշադրություն հրավիրեց պաշտոնական Երեւանի եւ Բաքվի հայտարարությունների վրա, ապա գնահատեց. «Մենք ունենք լուրջ վտանգներ, եթե իրավիճակն անհապաղ չհանդարտվի»:

Մոգերինին հիշեցրեց, որ ապրիլի 2-ից սրված իրավիճակի կապակցությամբ կապ է հաստատել Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների հետ, ապա ավելացրեց, որ առաջիկայում կշարունակի նրանց հետ քննարկել իրավիճակը:

Մոգերինին Եվրոպական խորհրդարանի ներկայացուցիչներին դիմեց Հայաստանի եւ Ադրբեջանի քաղաքական մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ շփումների միջոցով խնդրի կարգավորմանն աջակցելու

խնդրանքով եւ վերահաստատեց. «Ավելի քան պարզ է՝ հակամարտությունը չունի ռազմական լուծում»:

Ղարաբաղյան հակամարտության գոտում լարվածության աճի մասին ելույթ են ունեցել նաեւ մի շարք եվրախորհրդարանականներ, որոնց մեծ մասը հանդես է եկել հայամետ դիրքորոշմամբ:

Այսպես, Չեխիան ներկայացնող եվրապատգամավոր Յարոմիր Շտետինան իր ելույթում մասնավորապես ընդգծել է այն հանգամանքը, որ Մինսկի խմբի համանախագահները կոչ են անում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին՝ ընդունել հրադադարի խախտումների հետաքննության մեխանիզմի ներդրման առաջարկությունն այն պարագայում, երբ Հայաստանն արդեն դրան համաձայնել է:

Կիպրոսը ներկայացնող եվրապատգամավոր Մավրիդիս Կոստասը եւս իր ելույթում եվրախորհրդարանականների ուշադրությունը հրավիրել է հրադադարի ռեժիմի խախտումները հետաքննող մեխանիզմների կիրառումից Ադրբեջանի հրաժարվելու փաստի վրա: Եվրախորհրդարանում ունեցած ելույթի ժամանակ Կիպրոսի մեկ ուրիշ ներկայացուցիչ՝ Էլենի Թեոխարուսը, նշել է, որ Ղարաբաղի բնակչության նկատմամբ Ադրբեջանի սանձազերծած վերջին հարձակումների առնչությամբ ԵՄ-ն պետք է պատժամիջոցներ կիրառի վերջինիս նկատմամբ: «Եվրամիությունը պետք է աջակցի Ղարաբաղի ժողովրդին, որը պայքարում է իր ազատության համար: Մենք պետք է ճանաչենք Լեռնային Ղարաբաղը եւ պատժամիջոցներ կիրառենք Ադրբեջանի նկատմամբ: Դա մեզ կմոտեցնի խաղաղության հաստատմանը»,- ասել է Թեոխարուսը:

ԼՂՀ ճանաչման կոչով հանդես է եկել նաեւ ԵԽ Լյուքսեմբուրգից ընտրված պատգամավոր Ֆրենկ Էնգելը: «Միակ բանը, որ այս դեպքում պետք է տեղի ունենա, ԼՂՀ ճանաչումը կլինի»,- ասել է նա: «Ադրբեջանն այսօր մնում է ագրեսոր, ինչպես ագրեսոր էր 24 տարի առաջ: Նա շարունակել է խախտել հրադադարն ավելի փոքր մասշտաբով եւ շատ երկար ժամանակով, եւ դա անում է, որովհետեւ համոզված է, որ բոլոր հայերն այդ տարածաշրջանում պետք է անհետանան», - նշել է պատգամավորը՝ հավելելով, որ Ադրբեջանն է, որ չի ուզում որեւէ փոխզիջման գնալ:

Լյուքսեմբուրգցի խորհրդարանականը Հայաստանի եւ Ադրբեջանի հնարավոր փոխզիջումների հարցի մասին խոսեց՝ հիշատակելով Բաքվում ազգային հերոսի դափնիների արժանացած Ռամիլ Սաֆարովին, որին Էնգելը որակեց դաժան մարդասպան:

Ըստ պատգամավորի՝ միակ բանը, որ պետք է տեղի ունենա առկա իրավիճակում, Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչումն է:

«ԱՊԱՌԱԺ»

Արցախը երբեք չի վերադառնա Ադրբեջանի տիրապետության տակ

Ֆրանսիայի հայկական կազմակերպությունները համակարգող խորհրդի համանախագահ Մուրադ Փափազյանը եւ Ֆրանսիայում Ադրբեջանի դեսպան Էլչին Ամիրբաեւը ապրիլի 7-ի երեկոյան France 24 հեռուստաալիքով բանավեճ պետք է ունենային՝ կապված ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում ստեղծված իրավիճակի հետ, սակայն Փափազյանն ավելի ուշ հայտնեց, որ դեսպանը հրաժարվել է մասնակցել հաղորդմանը: Ապրիլի 11-ին բանավեճն, այնուամենայնիվ, տեղի է ունեցել:

Էլչին Ամիրբաեւը նշել է, թե իբր Հայաստանի դեսպանը չի ցանկացել իր հետ բանավիճել, սակայն ինքը համաձայնել է, որ հակառակվի Ֆրանսիայում հայկական լոբբիի ապատեղեկատվական քարոզչությանը:

Լրագրողի հարցին, թե ինչո՞ւ է խախտվել 1994-ին հաստատված հրադադարի ռեժիմը, նա պատասխանել է, որ Հայաստանի Հանրապետությունը զավթել է ադրբեջանական տարածքներ, այդ թվում՝ ԼՂ-ն, դրանք օտար՝ հայկական բանակի վերահսկողության տակ են, իսկ հրադադարը խախտվեց, որովհետեւ Հայաստանը շարունակում է ագրեսիան ու ցանկանում է ընդլայնել գրաված տարածքները, փորձում է շարունակել էթնիկ զտումները, որոնք իբր տեղ են գտել հակամարտության ընթացքում, նշում է, այսպես կոչված, Խոջալուի ցեղասպանությունը:

Ի պատասխան, Մուրադ Փափազյանը նշում է, որ դեսպանը, իր առջեւ նստած, շարունակում է ադրբեջանական քարոզչությունը՝ հիմնված ստի վրա: Նա ընդգծում է, որ հրադադարի ռեժիմի խախտումները այս 10 օրվա ընթացքում չէ, որ տեղի են ունենում, դրանք միշտ էլ շարունակվել են այս ընթացքում, իսկ Ադրբեջանը հրաժարվում է սահմանի երկայնքով տեղադրել հրադադարի խախտումներն արձանագրող էլեկտրոնային սարքեր, ինչպես առաջարկում է ԵԱՀԿ-ն: Փափազյանն ընդգծում է, որ իրականում հայ բնակչության ոչնչացումը Ադրբեջանում սկսվել է դեռեւս 1988-ից. Ստալինը 1923 թվականին հայկական Լեռնային Ղարաբաղը շնորհել է Ադրբեջանին, իսկ 1988-ին, հենվելով խորհրդային սահմանադրության տված հնարավորության վրա եւ առաջնորդվելով ժողովրդավարության հիմունքներով, ԼՂ ժողովուրդը խաղաղ ճանապարհով՝ հանրաքվեով, որոշեց միանալ Հայաստանին: Այդ խաղաղ քայլին Ադրբեջանը պատասխանեց կոտորածներով՝ Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում, Շուշիում, եւ ամբողջ աշխարհն է դա հիշում:

Երբ լրագրողը նշում է, թե Լեռնային Ղարաբաղը միջազգային հանրությունը համարում է ադրբեջանական տարածք, Փափազյանը բացատրում է, որ 1994 թվականին ստեղծված Մինսկի խմբի առաքելությունն այդ հարցին լուծում գտնելն է: Սակայն այդ թվականից ի վեր Ադրբեջանը մերժում է խաղաղ կարգավորման բոլոր ծրագրերը:

Ադրբեջանի դեսպանի փորձը՝ «ապացուցել», թե Ղարաբաղը երբեք էլ պատմականորեն հայկական տարածք չի եղել, այլ մշտապես պատկանել է Ադրբեջանին, կասեցվում է լրագրողի կողմից, նա պնդում է, որ բանավեճի թեման ոչ թե պատմությունն է, այլ իրավիճակի ներկայիս սրումը սահմանին: Նա հարնցում է, թե արդյո՞ք ճիշտ չեն պնդումները, որ Ալիեւը, ով հայտնի չէ որպես մեծ ժողովրդավար, երկրի սոցիալ-տնտեսական բարդ վիճակը քողարկելու, իր ժողովրդին շեղելու համար կիրառում է ազգայնականության խաղաքարտը: Դեսպանը պատասխանում է, որ կատարյալ ժողովրդավարություններ չկան, ապա հավելում է, որ ԵԱՀԿ ՄԽ համանախագահ երկրների նախագահները նույնպես ստատուս քվոն համարում են անընդունելի, եւ միջազգային հանրությունն իրենց կողմից է: Լրագրողը հարցնում է՝ արդյո՞ք դրա պատճառը ստրատեգիական հետաքրքրությունը չէ՝ նավթը, գազը, որոնք Թուրքիայով հասնելու են Եվրոպա: Դեսպանը պատասխանում է, թե դա միայն նշանակում է միջազգային օրենքներ հարգել: Նա պնդում է, թե իբր իրենք փորձել են խաղաղ միջոցներով լուծել խնդիրը, սակայն Հայաստանն ամեն ինչ անում է ստատուս քվոն՝ «տարածքների օկուպացիան» ամրապնդելու համար:

Լրագրողը բանավիճող կողմերին առաջարկում է կարգավորման լուծում առաջարկել: Ըստ Փափազյանի՝ հարկավոր է միջազգային հանրության հովանու ներքո ինքնորոշման հանրաքվե անցկացնել, ինչը բնականաբար անընդունելի է համարում Ադրբեջանի դեսպանը, ըստ որի՝ այդ տարածքները «զտված են ադրբեջանցիներից», եւ հանրաքվեն չի համապատասխանի միջազգային օրենքներին:

Փափազյանը նշում է, որ Ադրբեջանի սանձազերծած պատերազմում հաղթել են հայերը՝ հողագործ ղարաբաղցիները, ովքեր շատ ծանր վիճակում են ապրել Ադրբեջանի տիրապետության տակ: Նա շեշտում է, որ Ադրբեջանը բռնատիրական, ոչ ժողովրդավար երկիր է, հիշեցնում է Ալիեւի ռազմաշունչ հայտարարությունները, նաեւ՝ Ռուսաստանում Ադրբեջանի դեսպան Բյուլ Բյուլ օղլիի խոստովանությունը, որ Ադրբեջանն է խախտել հրադադարի ռեժիմը ու վերսկսել ռազմական գործողությունները:

Ի դեպ, Ադրբեջանի դեսպանը անգամ այս բանավեճում է ակնարկում, որ իր երկիրը ամենեւին էլ հակված չէ հակամարտության խաղաղ լուծմանը: Նա հայտարարում է, որ «այժմ 1992 թվականը չէ, այլ՝ 2016-ը, եւ Ադրբեջանը չի հանդուրժի իր տարածքների շարունակվող օկուպացիան»: Որպես լուծում՝ առաջարկում է ընդունել ՄԱԿ-ի՝ «օկուպացիան» դատապարտող 4 բանաձեւերը, Բուդապեշտի՝ կարգավորման փուլային տարբերակը, ՀՀ զինված ուժերը դուրս բերել «օկուպացված տարածքներից», 1 մլն ադրբեջանցի փախստականներին վերադարձնել բնակության հին վայրերը, հետո միայն խոսել Ղարաբաղի ժամանակավոր կարգավիճակի մասին: Ընդ որում, ըստ նրա, Ադրբեջանը ղարաբաղյան կողմ, որպես այդպիսին, չի ընդունում, քանի որ, ըստ նրա, ԵԱՀԿ ՄԽ շրջանակում կա 2 կողմ՝ Հայաստան եւ Ադրբեջան:

Մուրադ Փափազյանը դարձյալ շեշտում է, որ ԼՂ-ն պատմական հայկական տարածք է՝ բնակեցված հայերով, եւ խաղաղ գործողությամբ՝ հանրաքվեով, իր անկախությունն է հռչակել՝ ի պատասխան ստանալով կոտորածներ, եւ երբեք չի վերադառնա Ադրբեջանի տիրապետության տակ:

yerkir.am

Հայրապետական օրհնություն՝ նվիրված Արցախին ու հայոց բանակի զինվորներին

Գանձասարի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն իրենց հայրապետական օրհնությունն են տվել Արցախին ու հայոց բանակի զինվորներին:

Հայրապետական օրհնությանը ներկա էին Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԼՂՀ Ազգային Ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, ԼՂՀ ԱԺ փոխնախագահ Վահրամ Բալայանը, ԼՂՀ ԱԺ մի շարք պատգամավորներ, պաշտոնատար այլ անձինք, ԼՂՀ ՊԲ բարձրաստիճան սպաներ եւ զինվորներ:

Հայոց երկու կաթողիկոսներն աղոթել են Արցախի խաղաղության ու հայ զինվորի անվտանգ ծառայության համար:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը, դիմելով ժողովրդին, ասել է.

«Հակառակորդի դեմ ելավ անկախության սերունդը՝ պաշտպանելու իր հայրերի քաջագործությամբ ու հերոսական ոգով կերտված Արցախի անկախությունը: Այդ սերնդի մեջ իրենց հայրերի, Ավարայրի ու Սարդարապատի ոգին է: Նրանք կտրիճներ եղան պատերազմի մեջ ըստ առաքելական խոսքի եւ հաղթեցին, քանզի ամեն ոք, որ Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհում»:

Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսն իր խոսքում ասել է, որ առաջին անգամ է Արցախում, սակայն, որպես մնայուն ներկայություն, Արցախը մշտապես իր սրտի ու հոգու մեջ է: «Խոնարհվում եմ բոլոր այն հերոս զինվորների հիշատակի առջեւ, ովքեր իրենց թանկ արյունը հեղեցին հայրենիքի պաշտպանության ճանապարհին:

Արցախը մեր ժողովրդի համար վավերական հայության, ամուր հավատքի,

պայծառ տեսիլքի հոմանիշ է: Արցախյան գոյամարտը ցույց տվեց, որ հայությունը բարձրագույնս գիտի իր հայրենիքի գինը եւ նվիրվածությամբ ու քաջությամբ պաշտպանում է այն: Մենք եկել ենք ասելու, որ մեր եկեղեցին հայ ժողովրդի, ազատության ու արդարության հետ է: Մենք զինված ենք մեր հավատքով, մշակույթով ու զենքով՝ հանուն մեր ազատության եւ իրավունքների պաշտպանության: Պատմությունը ցույց է տալիս, որ Ավարայրից սկսած՝ մեր պատմության բոլոր Ավարայրերում՝ մինչեւ Սարդարապատ, մինչեւ Ղարաբաղի ազատագրումը եւ մինչեւ այսօր մեր եկեղեցին կանգնեց մեր ժողովրդի կողքին, որովհետեւ եկեղեցին ժողովրդի եկեղեցին է, ժողովուրդն է մեր եկեղեցին:

Թող մեր թշնամին իմանա, որ իր դիմաց միայն Ղարաբաղի ժողովուրդը չէ կանգնած, այլ ամբողջ հայությունն է: Մեր ամբողջ ազգը բանակի է վերածվել այսօր՝ հավատքի զենքով, մշակույթի զենքով, պատերազմի զենքով, լծված է հավաքական պատերազմի՝ ի խնդիր մեր հայրենիքի ազատության, մեր իրավունքի պաշտպանության:

Պատմության մեջ երբեք չենք փորձել խախտել ուրիշների իրավունքները, բայց երբ փորձել են մեր իրավունքը խախտել, որպես մեկ ամբողջություն, վասն հայրենյաց պատերազմի դաշտ ենք նետվել: Այս է հայոց պատմության խորհուրդը»,- ասել է Արամ Ա կաթողիկոսը:

Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, դիմելով ներկաներին, նշել է, որ Հայոց երկու կաթողիկոսները եկել են մեզ գոտեպնդելու, զորավիգ կանգնելու, որպեսզի մենք, գոտեպնդված լինելով հայրական հորդորներով, գոտեպնդիչ օրհնությամբ շարունակենք մեր առաքելությունը:

«Հերոսական պահին մենք վկա ենք այս պատմական իրադարձությանը, երբ որ Հայոց հայրապետները մեր կողքին են, մեզ հետ են եւ եկել են Աստծո անունից մեզ զորացնելու, ինչը նշանակում է, որ մենք պետք է հաղթենք ու հաղթելու ենք, ապահովելու ենք մեր խաղաղությունը»,- ասել է Արցախի թեմի առաջնորդը:

Վեհափառ հայրապետներն այնուհետեւ այցելել են Գանձասարի Մատենադարան, ծանոթացել այնտեղ պահվող հայ մատենագրության ու մանրանկարչության նմուշներին:

Հաջորդ օրը՝ ապրիլի 14-ին վեհափառ հայրերը պատարագ մատուցեցին նաեւ Շուշիի սբ. Ղազանչեցոց եկեղեցում:

«ԱՊԱՌԱԺ»

Կին կապիտանը ոչնչացրել է թշնամու անօդաչու սարքը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հյուսիս-արեւելյան հատվածի զորամաս հասնելուն պես սուրճի հրավեր ենք ստանում: «Բանակի սուրճն ուրիշ է, այդ սուրճից ուրիշ տեղ չեք կարող փորձել»,- շտապում են շեշտել զինվորականները: Հյուրասիրության հրավերն ընդունում ենք:

Զորամասի «գրադարան-շտաբի» փոքր սենյակում տեղավորվում ենք կողք կողքի: Զորամասի ֆինանսական ծառայության պետ, գրադարանավար եւ միաժամանակ բուժքույր Մելսիդա Հարությունյանը շտապում է սուրճ դնել եւ պատմում քառօրյա պատերազմի առաջին օրվա կատարվածի մասին:

«Ապրիլի 2-ի գիշերն արթնացանք կրակոցներից: Խուճապի չմատնվելով՝ կանանց եւ երեխաներին տարհանեցինք Ստեփանակերտ: Շատերի բարեկամներն էլ Երեւանում էին, այդ պատճառով Հայաստանից տաքսիներ պատվիրեցինք, մեր վարորդները բնակիչներին հասցրին Շուշի, որտեղ նրանց արդեն սպասում էին պատվիրված մեքենաները,- պատմում է Մելսիդան: - Ամբողջ գիշեր ռմբակոծությունները չէին դադարում: Առավոտյան վերջին բնակիչներին տարհանելուց հետո՝ ամուսնուս հետ շտապեցինք զորամաս: Մեքենա չկար. այդ պատճառով Մարտակերտից մինչեւ Մատաղիս ահագին տարածություն անցել ենք ոտքով, մինչեւ մեքենայի հայտնվելը»:

Արդեն մի շաբաթից ավելի է, ինչ Մելսիդայի անկողնուն փոխարինել է աթոռը, իսկ գլխատեղը սեղանն է: Չի բողոքում: Միակ խնդրանքը փոքր համարի զինվորական կոշիկներն են. «40 համարից փոքր կոշիկ չկա: Նույնիսկ մի քանի գուլպաներով հանգնելուց՝ մեծ են: Քայլելը դժվար է այս կոշիկներով, էլ չեմ խոսում վազելու մասին»,- ասում է նա:

Մելսիդան 91 թվականից մասնակցել է Արցախյան պատերազմին: Նա եւ հետախուզության է գնացել, եւ մասնակցել մարտերին, եւ օգնել վիրավորներին: Նա մասնակցել է Շոշի, Շուշիի, Լաչինի, Քարվաճառի, Մարտակերտի ազատագրման մարտերին, 1,5 տարի կռվել Շահումյանում՝ ադրբեջանցիների թիկունքում: Պատերազմի ժամանակ Մելսիդան 2 անգամ ծանր վիրավորվել է, 3 անգամ կոնտուզիա ստացել: Նրա ճակատին փամփուշտից մնացած սպի կա: Նրա մարմնից 24 բեկոր են հանել, որից 4-ը Մելսիդան ինքն է հանել «Եղնիկներում»: Երեք բեկոր էլ դեռ մնում է ազատամարտիկ կնոջ մարմնում:

Պայմանագրային զինծառայող Նորայրի ձեռքերն ականից վնասվել են, մի քանի օրով ուղարկել են զորամաս ապաքինվելու: Տեղը տեղ չի տալիս, ուզում է շուտ գնալ ընկերների մոտ: Դեպքի մանրամասնությունները չի պատմում, տեսախցիկը տեսնելուն պես՝ շրջվում է, ընկերներն ասում են, որ նկարվել չի սիրում:

«Մի քանի օր առաջ անօդաչու սարք էր հայտնվել զորամասի վերեւում, մինչեւ մենք գործի անցնենք, Մելսիդան վերցրել էր զենքը եւ մի քանի րոպեներ անց ոչնչացրել սարքը»,- պատմում է Նորայրը:

«Հրամանատարին խնդրեցի, որ թույլ տա դիրքեր բարձրանամ, չեմ կարող այստեղ հանգիստ նստել: Համ էլ տղաներին ոգեւորելու եւ թիկունք կանգնելու խնդիր կա: Սակայն չթույլատրեց: Հաջորդ օրը նորից մոտեցա, այս անգամ ասաց՝ համբերիր,- խռովված, բայց հրամանն օրենք համարելով շարունակում է Մելսիդան,- ախր կիսատ մնացած գործը պիտի ավարտենք եւ մեզ պատկանող հողերն ազատագրենք: Այն ժամանակ չպետք է ընդունեինք խաղաղության դաշինք, մենք պետք է առաջ գնայինք, որ

այսօր նման խնդիր չունենայինք եւ մեր տղաները չզոհվեին առաջնագծում...»:

Մելսիդայի ամուսինը, ինչպես Մելսիդան է ասում, առաջին իսկ օրվանից իր հետ է: Նա Մարտակերտի ՀԷԿ-ի հսկիչն է, միաժամանակ ամեն ինչով օգնում է զորամասում:

Ամուսինը հպարտությամբ պատմում է, որ կինն Արցախյան պատերազմի ժամանակ ոչնչացրել էր տասնյակ ադրբեջանցիների:

Մելսիդա Հարությունյանը պարգեւատրվել է «Մարտական ծառայություն» եւ «Շուշիի ազատագրման համար» մեդալներով, «Մարտական խաչի» շքանշանակիր է: Ստացել է կապիտանի կոչում:

Ամուսինները երեխաներ չունեն, բայց ճակատում կռվող բոլոր տղաներին իրենց զավակներն են համարում:

«25 տարի է՝ ապրում եմ Արցախում, եւ 25 տարի բանակ գնացող-եկողներն իմ որդիներն են: Այստեղ իմը, քոնը չկա: Աստված ինձ այս ամբողջ բանակ երեխաներին է տվել, ու ես երջանիկ եմ դրանով»,- ասում է կին կապիտանը:

Սուրճը եռաց: Մելսիդան մատուցում է մեզ, հյուրասիրում նաեւ կոնֆետներով եւ քաղցրաբլիթով:

«Նույն այս քաղցրաբլիթներն ու կոնֆետներն ուտում են նաեւ մեր սահմանը պահող զինվորները: Աստված թող խնայի նրանց, դեռ շատ գործ ունենք... Խմեք սուրճը, իսկ հաջորդ անգամ սուրճ կհյուրասիրեմ Բաքվում...»,- ասում է նա:

Լ. ԹԵՎՈՍՅԱՆ

Մարտակերտի շրջանն ապրիլյան քառօրյա պատերազմից հետո...

Ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում ադրբեջանական կողմը հրետակոծել է Մարտակերտի մի շարք բնակավայրեր: Հրետակոծության հետեւանքով վնասվել է Մատաղիսի ՀԷԿ-ը, Թալիշի, Մատաղիսի եւ Մարտակերտի դպրոցներն ու մանկապարտեզները, տասնյակ տներ հանվել են շարքից:

Ծնվել եմ Մարտակերտո՛ւմ, Մարտակերտո՛ւմ էլ պիտի մեռնեմ

Մարտակերտի Պարույր Սեւակ թաղամասում ապրող Գուրգեն Նալբանդյանի եւ կնոջ համատեղ ուժերով 40 տարի առաջ կառուցված տունն ապրիլի 3-ին հրետակոծության հետեւանքով վնասվել է:

Գուրգենը տան միակ բնակիչն է. կինը մահացել է 5 տարի առաջ, աղջիկներն ամուսնացած են: Դեպքի պահին Գուրգեն Նալբանդյանը տանը չէր: «Վարչակազմի շենքում էի. ծանոթներիցս մեկն ասաց, որ տունս վնասվել է: Դու մի ասա՝ ոչ թե վնասվել է, այլ տնիցս բան չի մնացել»,- ասում է նա:

Տան խոհանոցը եւ բաղնիքն ամբողջությամբ ավերված են, վնասվել են նաեւ պատշգամբն ու դարպասը:

«Տունը կառուցվում ու վերանորոգվում է, իսկ մարդուն հնարավոր չէ վերակառուցել: Փառք Աստծո՝ այդ պահին տանը չէի,- ասում է 77-ամյա Գուրգեն պապը եւ նշում, որ թեկուզ աղջիկները պնդում են, որ իրենց մոտ տեղափոխվի, սակայն գնալու մտադրություն չունի,- թող մեր թշնամին խելքը գլուխը հավաքի, մենք այստեղից գնացողը չենք. ես ծնվել եմ Մարտակերտում, Մարտակերտում էլ պիտի մեռնեմ»:

Կրած վնասների չափերը գույքագրել է ԼՂՀ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության աշխատանքային խումբը: Գուրգեն Նալբանդյանի տան վերանորոգման աշխատանքներն արդեն սկսվել են:

Քառօրյա պատերազմի հետեւանքով վնասված կենցաղային տեխնիկաների խնդրի լուծումը ստանձնել է պետությունը:

Մատաղիսում մնացած միակ ընտանիքը, կենդանիներն ու գունավոր կավիճները...

Քառօրյա պատերազմի վերսկսումից մի քանի ժամ հետո Մատաղիսի բոլոր բնակիչները տարհանվել են: Համայնքում մնացած միակ բնակչները Գայանեն եւ իր ամուսինն էին:

«Կրակոցները սկսվեցին ուշ գիշերով, այնուհետեւ հրետակոծել են նաեւ գրադ կայանքից: Ականն ընկավ մեր պատշգամբի դեմը: Բնակիչներով որոշեցինք իջնել նկուղ, սակայն սպայական շենքերի նկուղներից մեկն էր նորմալ վիճակում, մնացածը ջրալցված էին, այդ պատճառով բնակիչները նստեցին մեքենաներն ու շարժվեցին Ստեփանակերտ,- պատմում է Գայանեն:

Մատաղիսում հոսանք չկար: Հիմա, երբ հոսանքը տվել են, դիմացի շենքի բնակարանների լույսերը, քանի օր է, վառվում են: Մարդիկ չեն հասցրել նույնիսկ լվացքը հավաքեն: Բակում կան մի քանի զինծառայողների մեքենաներ, ովքեր դիրքերում են: Բացի մեքենաներից, բակում կարող ենք հանդիպել կովերի նախիրի, մի քանի այծի, հավերի եւ անվտանգության նկատառումներով գյուղում թողած՝ բժիշկ զինծառայողի շանը:

Գայանեի ամուսինը թոշակի անցած զինծառայող է: Այս օրերին տեղափոխվել են «Վերին Մատաղիս»-ի տներից մեկը: «Այնտեղ համեմատաբար ապահով է»,- ասում է ամուսինը: Ամուսիններն օգնում են զորամասում աշխատող կնոջը՝ ճաշ պատրաստել զինվորների համար:

Ամուսիններն երեք զավակ ունեն: Կրտսեր որդին Մատաղիսում էր դեպքի օրը. ապահովության համար ծնողներն ուղարկեցին քույրերի մոտ, ովքեր սովորում են Ստեփանակերտում:

«Վիճակը մի քիչ հանդարտվի՝ կբերենք երեխային: Հարեւաններիս հետ էլ եմ ամեն օր խոսում. բոլորն ուզում են շուտ տուն վերադառնալ...,- բակում քամուց շարժվող մանկական ճոճանակի ճռճռոցն ընդհատում է մեր զրույցը: Գայանեն ցույց է տալիս պատուհանագոգին շարված խաղալիքները,- երկրորդ հարկի հարեւանս 20 օր է, ինչ տուն է ստացել եւ տեղափոխվել. չի էլ հասցրել վայելել այն: Այստեղ ապրող բոլոր զինծառայողներն առնվազն 2 զավակներ ունեն, այդ պատճառով բակում միշտ աշխույժ մթնոլորտ էր տիրում...»:

Իսկ բակում գտանք պայթած գնդակ, որը գուցե հրետակոծության հետեւանքով է փչացել: Անտեր էին մնացել նաեւ գունավոր կավիճները... Մանկական ճոճանակն էլ քամուց անընդհատ այս կողմ այն կողմ է շարժվում...

Մանկական խաղահրապարկում, ի հեճուկս պատերազմի, որոշ ժամանակ հետո, անշուշտ, նորից կաշխուժանա խաղը, երբ վերադառնան փոքրիկները... Վերադարձը չի ուշանա...

Փետրվարի 16-ին Մարտակերտի շրջանի Մատաղիս ավանում տոնական տրամադրություն էր. 24 սպաների ընտանիքների համար բնակարանամուտ էր: Մատաղիսի զինվորական շենքերում ապրում է շուրջ 100 ընտանիք:

Ամեն ինչ լավ է լինելու. եթե այդպես չմտածեի, Մարտակերտում չէի մնա...

Անահիտ Հայրապետյանը Մարտակերտ քաղաքի բնակչուհի է: Զավակներից երեքն ամուսնացած են, փոքրը 16 տարեկան է. աղջիկն ապրում է իր հետ:

«Գիշերվա ժամը 3-ին աղջիկս արթնացրեց ինձ. լսեցի կրակոցների եւ մեքենաների ձայներ: Պատուհանից նայեցի եւ տեսա, որ ժողովուրդը, մեքենաների մեջ խցկված, մեքենաներն են լիցքավորում ու շարժվում՝ չգիտեմ որտեղ»,- պատմում է Անահիտը, ում տունը Մարտակերտի բենզալցակայանի կողքին է:

Անահիտը Մարտակերտից քառօրյա պատերազմի օրերին չի հեռացել, միայն թոռնիկներին տեղափոխել է Արջաձոր գյուղ՝ բարեկամների մոտ:

Նա Արարատի մարզից 11 տարի առաջ է տեղափոխվել Մարտակերտ: Ասում է՝ գնալու տեղ չունեմ:

«Կրակոցներ միշտ էլ եղել են, բայց կարծում էինք, որ այս անգամ էլ իրավիճակը կհանդարտվի: Սակայն մենք չենք վախենում: Իմ որդին առաջնագծում է, ինչո՞ւ պիտի վախենամ. նրանք մեր սահմաններն ամուր են պահում, իսկ մենք կանգնած ենք նրանց թիկունքին»:

«Ամեն ինչ լավ է լինելու. եթե այդպես չմտածեի, Մարտակերտում չէի մնա,- ասում է Անահիտը եւ շեշտում,- հայությունը միասնական է, այդ պատճառով մենք ոչ մի բանից չենք վախենում...»:

Թշնամին վնասել էր նաեւ Մատաղիսի հիդրոէլեկտրոկայանը

Հիդրոէլեկտրոկայանների աշխատանքի համար բարենպաստ եղանակներ են: Մատաղիսի ՀԷԿ-ն այս եղանակներին 24 ժամվա կտրվածքով տալիս է 130-160 հազար կիլովատ էներգիա, սակայն քառօրյա պատերազմի ժամանակ թշնամու հրետակոծությունների հետեւանքով ՀԷԿ-ի աշխատանքը խափանվել է:

«Սարսանգի ջրամբարի ջուրը լրիվությամբ չի օգտագործվում եւ մենք ջուր ենք կորցնում, իսկ եթե ջուր ենք կորցնում, ապա կորցնում ենք նաեւ փող»,- ասում է Մատաղիսի կասկադի տեղամասի պետ Սերգեյ Ղրաղյանը:

Ապրիլի 2-ի առավոտյան արկն ընկավ ՀԷԿ եւ վնասեց երեք շարժիչներից մեկը: Շենքում հրդեհ բռնկվեց, սակայն, բարեբախտաբար, գեներատորը չպայթեց, իսկ աշխատողներն արագ կողմնորոշվեցին եւ հանգցրին հրդեհը: Աշխատողներից ոչ մեկը չի վնասվել:

Վնասվել է հիդրոէլեկտրոկայանի առաստաղը, ապակիները ջարդվել են, շենքի վրա «Մատաղիս 1» գրության տառերը պոկվել եւ թափվել են ջրամբար:

«Դրանից հետո էլ թշնամին շարունակում էր հրետակոծությունը, սակայն ՀԷԿ-ը չի վնասվել: Վնասվել է պահակակետը, «Արցախ ՀԷԿ»-ի ութ բնակարանոց շենքը»,- նշում է Ա. Ղրաղյանը:

Խաթարվել էր բջջային էլեկտրականության օդային գիծը: Տեղամասի պետի խոսքերով՝ մի քանի օրից կանցնեն աշխատանքի. շինարարները պետք է վերականգնեն առաստաղը, մասնագետները ստուգեն շարժիչները, պետք է փոխվեն ապակիները:

Մատաղիսի ՀԷԿ-ը գործում է 2012 թվականից: ՀԷԿ-ն ունի 48 աշխատող:

Լ.Թ

Գեւորգ Մանուկյանի առաջին կրակոցից խոցվեց թշնամու ռազմական ուղղաթիռը

Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերն Արցախի հյուսիսում՝ Մարտակերտի եւ ադրբեջանցիների վերահսկողության տակ գտնվող Շահումյանի շրջանների միջեւ տեղակայված «Եղնիկներ» զորամասի վրա հակառակորդը 50 հոգուց բաղկացած դիվերսիոն խմբով հետախուզական ներթափանցման փորձ է կատարել: Սակայն հակառակորդի հատուկ նշանակության ջոկատայինների կողմից ձեռնարկված գործողությունը ժամանակին հայտնաբերվել է հայ դիրքապահների կողմից, եւ հակառակորդը, կրելով կենդանի ուժի եւ զինտեխնիկայի մեծ կորուստ, այդ թվում՝ մեկ ռազմական ուղղաթիռ, հետ է շպրտվել:

«Առավոտյան ժամը 6:45 րոպեին նկատել ենք հակառակորդի ուղղաթիռը, որը ռմբակոծում էր մեր մարտական դիրքերը: Մի քանի րոպե անց՝ առաջին փորձից խոցել եմ այն»,- ասում է ՊԲ պայմանագրային զինծառայող Գեւորգ Մանուկյանը, ով առաջին անգամն էր «Իգլա» շարժական զենիթահրթիռային համալիրից կրակում: Այնուհետեւ կես կատակ, կես լուրջ ավելացնում է. - Մեր դիրքերի ուղղությամբ ապրիլյան պատերազմը տեւեց մեկ օր: Այդ դեպքից հետո մեր դիրքերի ուղղությամբ հակառակորդի հարձակումներն ու կրակոցները դադարեցին»:

Ծնունդով Շիրակի մարզի Հոռոմ գյուղից է Գեւորգը: 21 ամիս է, ինչ ծառայում է ԼՂՀ Պաշտպանության բանակում:

Խոսելով դիրքապահների մասին՝ նշում է, որ տղաների մարտական ոգին բարձր է, ամեն ինչ լավ է, եւ բոլորն էլ պատրաստ են առաջ գնալու...

«Սահմանը պահող յուրաքանչյուր զինվոր առաջին հերթին պաշտպանում է իր ընտանիքը: Իհարկե, յուրաքանչյուրն ունենում է վախի զգացում, սակայն այդ վախը գործոն չի հանդիսանում, որպեսզի որեւէ մեկը կոտրվի: Այդ վախն էլ հարաբերական է՝ վախենում ես ոչ թե սեփական անձիդ համար, այլ քո ընտանիքի, քո ընկերների համար: Այն պատվի եւ պատասխանատվության զգացումը, որ մեր նախնիները մեր հողը արյան գնով են պահել, նույնպես մեզ տանում է դեպի կռվի դաշտ եւ ստիպում ավելի զգոն եւ պարտավորված լինել»,- շեշտում է Գեւորգը:

Գրավված դիրքերի մասին՝ Գեւորգն ասում է, որ դա զինվորների ընկճման պատճառ չի կարող հանդիսանալ, հակառակը՝ պատճառ են՝ ավելի կազմակերպվելու: Նրա կարծիքով՝ ավագ սերնդի ներկայությունը երիտասարդ սերնդին ավելի ուժեղ եւ հանգիստ է դարձնում:

Մինչեւ քառօրյա պատերազմի վերսկսելը հարազատների հետ երեք ամիս չէր խոսել: Ծնողներին զանգելու հնարավորություն ընձեռնվեց միայն ամսի 12-ին՝ հակառակորդի երկու ուղղաթիռ եւ հինգ տանկ խոցած զինծառայողների պարգեւատրության օրը: Զինծառայողներ Գեւորգ Մանուկյանին, Մարատ Պետրոսյանին եւ Նարեկ Մալխասյանին հերոսության համար պարգեւատրեցին մեքենաներով: Մի քանի ժամ տեւած միջոցառումից հետո հերոսներն շտապեցին առաջնագիծ՝ շարունակելու ծառայությունը:

«Ծառայությունս ավարտելուն պես իմ մեքենայով կգնամ տուն, արդեն մտքում պատկերացնում եմ մայրիկիս ուրախությունն ու հայրիկիս հպարտությունը»,- ասում է Գեւորգը:

Զինծառայող բոլոր որդիների ծնողներին համբերություն եւ հավատ է մաղթում: «Համբերություն, որպեսզի դիմանան՝ մինչեւ իրենց որդիների տունդարձը, եւ հավատ, որ մենք ամենակարողն ենք եւ ամուր կպահենք մեր հայրենիքի սահմանները»,- շեշտում է Գ. Մանուկյանը:

Գեւորգը, խոսելով ապագայի մասին, նշում է. «Մարդ պետք է հստակ նպատակներ ունենա, այլ ոչ թե երազանքներ: Ես իմ նպատակներն ունեմ. պիտի ավարտեմ ուսումս, աշխատանքի անցնեմ, ընտանիք կառուցեմ եւ շատ երեխաներ ունենամ, ովքեր պիտի ապրեն հզոր Ազատ, Անկախ, Միացյալ Հայաստանում...»:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Պապերի սպանությունը ներվում է, երեխաներինը՝ երբեք

ԼՂՀ ՊԲ-ից հայտնեցին, որ հայկական կողմին վերադարձված մեր 18 տղաների դիերը խոշտանգված են՝ բոլորը: Ադրբեջանի ՊՆ-ն, ստանալով իր 13-ի դիերը, չի նշել խոշտանգումների մասին, անգամ՝ մեկ դիակի պահով: Մենք նրանց դիերը չենք խոշտանգել, ոչ մեկինը:

Այս օրերին Բաքվի հայկական եկեղեցու բակից ոչ մի ադրբեջանցի լրագրող ռեպորտաժ չարեց: Չկա այդ եկեղեցին, եղել է, բայց էլ չկա:

Այս օրերին լրագրող Թաթուլ Հակոբյանը ռեպորտաժ պատրաստեց Աղդամի ադրբեջանական մզկիթի մինարեթից: Եղել է այդ մզկիթը եւ հիմա էլ կա:

Փոխարենը Ջուղայի խաչքարերը չկան, եւ Սողոմոն Քոչարյանը չկա, որին ցմահ ազատազրկել էին իրանահպատակ ադրբեջանցու սպանելու համար, եւ ով բոլորովին վերջերս մահացավ: Ազատազրկել էին, քանի որ Հայաստանում ադրբեջանցի սպանելն էլ է հանցագործություն: Բայց Ռամիլ Սաֆարով կա, ով կացնահարել էր Գուրգեն Մարգարյանին, եւ որին ցմահ էլ չեն ազատազրկել, ազատություն են տվել, քանի որ Ադրբեջանում հայ սպանելը հանցագործություն չէ:

Ադրբեջանն ագրեսոր է, բայց ոչ ոք այդ մասին ոչինչ չի հայտարարում:

Մենք ագրեսոր չենք, բայց մեր ագրեսոր չլինելու մասին ոչ ոք չի հայտարարում:

Ու մենք իրար նման ենք դառնում, աշխարհում իրար նման ենք ընկալվում, տարբերություն չկա՝ հա՞յ է, թե՞ ադրբեջանցի: Ագրեսո՞ր է, թե՞ զոհ: Բայց եթե չկա այս տարբերությունը, ուրեմն ինչո՞ւ նրանց դիերից ոչ մեկը... Աղդամի մզկիթն ու մինարեթը... Հայաստանում ադրբեջանցի սպանելը...

Ես գիտեմ ու բոլորս էլ գիտենք, թե՝ ինչու, բայց արժե՞ եւ դեռ որքան արժե՞, էլ ի՞նչ պետք է լինի, որ ասենք՝ հերիք է, մեր դպրոց գնացող երեխաների՞ն պետք է սպանեն, թե՞ մեր տարեց ծնողների ականջները կտրեն...

Սա պատերազմ չէ, սա պատերազմ է թուրքի դեմ, դրանք տարբեր բաներ են: Օրինակ՝ գերմանացիներն ու ֆրանսիացիները պատերազմել են, ֆրանսիացիները անգլիացիների հետ էլ են պատերազմել՝ մի ամբողջ հարյուր տարի, բայց հիմա հաշտ, համերաշխ ապրում են: Մենք թուրք-ադրբեջանցու հետ նույնն անել չենք կարող, որովհետեւ նրանք մեր պապերին չեն սպանել, նրանք մեր երեխաներին են սպանում: Պապերի սպանությունը ներվում է, երեխաներինը՝ երբեք: Երեխաներն ավելի սիրելի չեն, պարզապես երեխաները հիմա են, հենց մեզ հետ են, մեզնից «հետո»-ն են: Նրանց սպանությունը մեր աչքի առջեւ է կատարվել, ոչ թե մեզ պատմել են, նրանց սպանությունը մարդասպանություն չէ, ցեղասպանություն է: Իսկ ցեղասպանությունը կա՛մ իսպառ վերացնում է, կա՛մ հավերժ թշնամացնում: Ցեղասպանողն էլ երկու տեսակի է լինում՝ գերմանացու տեսակը եւ թուրքի տեսակը: Գերմանացու տեսակին կարելի է դատել՝ ազդվում է, զղջում է, զիջում է, փոխհատուցում է, թուրքին հնարավոր չէ դատել... Թեեւ պետք է նշել, որ ցեղասպանվածի էլ երկու տեսակ կա՝ հրեա տեսակը եւ հայ տեսակը: Հրեան կարողանում է ազդել, զղջացնել, զիջում կորզել, փոխհատուցում ստանալ, հայը չի կարողանում:

Ու ռուսը մեղավոր չէ...

Հովիկ ԱՖՅԱՆ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ 100 դրամ:

Խմբագրական խորհուրդ